ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՆՈԹԵԻԶՄ /միաստվածություն/
SPECIAL TOPIC: MONOTHEISM

Մարդկությունը միշտ զգացել է, որ իրականությունը ավելին է քան միայն ֆիզիկականը (այսինքն՝ իրենց վերահսկողությունից դուրս գտնվող երևույթների կողմից ազդեցություն ունենալը, ինչպես օրինակ՝ փոթորիկները, խավարումները, եղանակը, աղետները, մահը, և այլն): Մարդաբանները մեզ ասում են, որ պարզագույն հոմինոիդների գերեզմաններում գտնում են իրեր, որոնք ըստ երևույթին հաջորդ կյանքի համար են եղել դրված, որը նրանք դիտարկում էին որպես այս կյանքի երկարացում:

Առաջին գրառված մշակույթը շումերականն է (հարավային Տիգրիս, Եփրատ գետերը), որը սկիզբ է առել Ք.Ա.10000-8000թթ: Նրանք գրում էին բանաստեղծություններ, որով արտահայտում էին իրենց տեսակետը աստվածների և նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ, ճիշտ ինչպես մարդիկ՝ իրենց բոլոր թերություններով հանդերձ (այսինքն՝ ինչպես հետագայում Քանանի, Հունաստանի և Հռոմի պանթեոնները): Նախքան գրի առնվելը նրանց ավանդույթները գոյատևել էին բանավոր տեսքով:

Գոյություն ուներ ժամանակագրական աստվածաբանական զարգացում՝

1. անիմիզմից դեպի
2. բազմաստվածություն, այդտեղից էլ՝
3. բարձրյալ աստծուն (կամ դուալիզմ)

«Միաստվածության» հասկացությունը (միայն մեկ Աստված), ոչ թե պարզապես բազմաստվածության «ամենաբարձր աստված» կամ պարսկական դուալիզմի բարի աստվածը (Զրադաշտականություն), յուրահատուկ է Իսրայելին (Աբրահամ, Ք.Ա. 2000): Միայն մեկ բացառություն կա շատ կարճ ժամանակով Եգիպտոսում (Ամենհոտեպ IV, նաև հայտնի որպես Ախենաթեն, Ք.Ա.1367-1350 կամ 1386-1361):

Այս գաղափարը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի հատվածներում:

1. «չկա ոչ ոք ՅԱՀՎԵ-ի կամ *Elohim*-ի պես»՝ Ելից 8:10; 9:14; 2 Օր.33:26; 3 Թագ.8:23
2. «ոչ ոք բացի Նրանից»՝ 2 Օր.4:35,39, 32:39, 1 Թագ.2:2, 2 Թագ.22:32, Ես.45:21, 44:6,8, 45:6,21
3. «ՅԱՀՎԵՆ մեկն է»՝ 2 Օր.6:4, Հռոմ.3:30, 1 Կորն.8:4,6, 1 Տիմ.2:5, Հակ.2:19
4. «չկա Քեզ պես մեկ»՝ 2 Թագ.7:22; Երեմ.10:6
5. «միայն Դու ես Աստված»՝ Սաղմ.86:10; Ես.37:16
6. «Ինձանից առաջ Աստված չեղավ, և ինձանից հետո չի լինելու»՝ Ես.43:10
7. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա… ուրիշը չկա»՝ Ես.45:5,6,22
8. «Նա է ամեն բանի աղբյուրը»՝ Ես.45:7 (տես՝ Ամովս 3:6)
9. «Նրանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:14,18
10. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:21
11. «Ես եմ Աստված ու Ինձ նմանը չկա»՝ Ես.46:9

Պետք է ընդունել, որ այս կենսականորեն կարևոր վարդապետությունը հայտնությամբ աստիճանաբար է տրվել: Սկզբնական սահմանումը հավանաբար հասկացվել է որպես «հենոթեիզմ» կամ գործնական մոնոթեիզմ (այսինքն՝ գոյություն ունեն այլ աստվածներ, սակայն մեր համար կա միայն մեկը (տես՝ Ելից 15:11, 20:2-5, 2 Օր.3:28, 5:7, 6:4,14, 10:17, 32:12, 3 Թագ.8:23, Սաղմ.83:18, 86:8, 136:1-2):

Առաջին տեքստերը, որ սկսել են մատնանշել եզակիություն՝ (փիլիսոփայական մոնոթեիզմ) վաղ շրջանի են (Ելից 8:10; 9:14; 2 Օր.4:35, 39; 33:26): Լիարժեք և կատարյալ սահմանումները գտնվում են Եսայի 43-46 (տես՝ 43:11; 44:6,8; 45:7,14,18,22; 46:5,9):

ՀԿ-ը արժեզրկում է ազգերի աստվածներին որպես՝

1. մարդու ձեռքի գործեր՝ 2 Օրինաց 4Լ28, 4 Թագ.19:18, Սաղմ.115:4-8, 135:15-18, Ես.2:8, 17:8, 37:19, 40:19, 41:7,24,29, 44:10, 12, 46:6-7, Երեմ.10:3-5, Հայտն.9:10
2. դևեր՝ 2 Օրինաց 32:17, Սաղմ.106:37, Ես.8:19, 19:3զ, 1 Կորնթ.10:20, Հայտն.9:20
3. ունայնություն, դատարկություն՝ 2 Օրինաց 32:21, 4 Թագ.17:15, Սաղմ.31:6, Ես.2:18, 41:29, Երեմ.2:5, 10:8, 14:22, Երեմ.2:5, 8:19

4. չաստվածներ՝ 2 Օրինաց 32:21, 2 Մնաց. 13:9, ես. 37:19, Երեմ. 2:11, 5:7, 1 Կորնթ. 8:4-5, 10:20, Հայտն. 9:20:

ՆԿ-ը վկայակոչում է 2 Օր.6:4-ը Հռոմ.3:30; 1 Կորն.8:4,6; Եփես.4:6; 1 Տիմ.2:5 և Հակ.2:19-ում: Հիսուսը մեջբերում է այն որպես առաջին պատվիրան Մատթ.22:36-37; Մարկ.12:29-30; Ղուկ.10:27: Թե՛ ՀԿ-ը և թե՛ ՆԿ-ը հաստատում են այլ հոգևոր էակների իրողությունը (դևեր, հրեշտակներ, տես՝ Հատուկ Թեմա. Հրեշտակներ և դևեր), սակայն միայն մեկ արարիչ/փրկիչ Աստված (ՅԱՀՎԵ, Ծննդ.1:1):

Աստվածաշնչյան միաստվածությունը ՀԿ-ում բնութագրվում է՝

1. Աստված մեկ է և բացառիկ (գոյաբանությունը ենթադրվում է, ոչ թե մատնանշվում)
2. Աստված անձ է (տես՝ Ծննդ.1:26-27, 3:8)
3. Աստված բարոյական է (տես՝ Ելից 34:6, Նեեմ.9:17, Սաղմ.103:8-10)
4. Աստված մարդուն Իր պատկերով է ստեղծել (Ծննդ.1:26-27) հաղորդակցվելու համար (այսինքն՝ #2): Նա նախանձոտ Աստված է (տես՝ Ելից 20:2-3):

Նոր Կտակարանից.

1. Աստված ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն, 8:11)
2. Աստված կատարելապես և ամբողջովին հայտնեց Իրեն Հիսուսի մեջ (տես՝ Հովհ.1:1-14, Կող.1:15-19, Եբր.1:2-3)
3. Ընկած մարդկության փրկության համար Աստծո հավիտենական ծրագիրը Իր միակ Որդու քավության զոհն է (Եսայի 53, Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21, Փիլ. 2:6-11, Եբրայեցիներին, տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը):